

ԿԳՄՍՆ ԳյուղմրուԼ թիվ 1 ավագ դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Կենսաբանություն

Թեմա՝ Պրոբլեմային ուղղուցման ազդեցությունը սովորողների վերլուծական մտածողության զարգացման վրա կենսաբանության դասերին

Կատարող՝ Եղիազարյան Նարինե Հենրիկի

Դպրոց՝ ՇՊՀ ավագ դպրոց

Ղեկավար՝ Ածիկյան Գոհար

ԳՅՈՒՄՐԻ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	Էջ 3
ԳԼՈՒԽ 1 Պրոբլեմային ուսուցում	Էջ 5
ԳԼՈՒԽ 1.1. Պրոբլեմային ուսուցման տեսություն	Էջ 5
ԳԼՈՒԽ 1.2. Պրոբլեմային ուսուցման խնդիրներն ու նպատակները.....	Էջ 6
ԳԼՈՒԽ 1.3. Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացությունները	Էջ 7
ԳԼՈՒԽ 2. Պրոբլեմային ուսուցումը որպես ժամանակակից մեթոդ	Էջ 9
ԳԼՈՒԽ 2.1. Պրոբլեմային ուսուցման ֆունկցիաները.....	Էջ 9
ԳԼՈՒԽ 2.2. Պրոբլեմային ուսուցման առավելություններն ու թերություններ....	Էջ 10
ԳԼՈՒԽ 2.3. Պրոբլեմային ուսուցման կազմակերպման մակարդակները	Էջ 11
Եզրակացություն	Էջ 22
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	Էջ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից: Ժամանակի հրամայականն է դարձել դարի մարտահրավերները հաղթահարող, ինքնուրույն ու ստեղծագործ մտածողություն ունեցող անհատի ձևավորումը:

Այսպիսի որակների ապահովումը տանելու էր կրթական պրոցեսների արմատական փոփոխությունների, որոնք պայմանավորված էին նաև համաշխարհային զարգացումներով ու փոփոխություններով:

Պետք էր վերանայել կրթության ավանդական մոտեցումները, որոնց հիմքում ընկած էին պատրաստի գիտելիքների մատուցման պարզ մեխանիզմները: Աշակերտը դառնում էր ուսուցչի հրահանգների պասիվ կրողը, մինչդեռ սովորողների ինքնուրույն մտածողության ձևավորումն ու զարգացումը միշտ էլ համարվել են ուսուցման գործընթացի կարևոր նպատակները: Պարզ էր, որ միայն նեղ առարկայական դաշտում գիտելիքների հաղորդումն ու հմտությունների ձևավորումը բավարար չէր: Առանձին առարկաների բովանդակության վրա կառուցված կրթական մոդելին պետք է փոխարիներ առանցքային կարողունակությունների վրա հիմնված մոդելը:

Փոխվել են ժամանակները: Փոխվել է նաև այսօրվա աշակերտի պահանջը գիտելիքից: Տեղեկատվական տեխնոլոգիաներն ու համացանցը իր ողջ գրավչությամբ խլում է աշակերտի ժամանակի մեծ մասը: Հետևաբար ուսուցման գործընթացը պետք է կազմակերպել այնպես, որ աշակերտը գիտելիքի պասիվ կրողից վերածվի գիտելիքը կերտողի: Պարտադիր է դարձել ժամանակակից համագործակցային ակտիվ մեթոդների ներմուծումը դպրոց, որը ապահովում է աշակերտների ակտիվ ներգրավվածությունը դասապրոցեսին, զարգացնում նրանց տրամաբանական մտածողությունն ու ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունը ինչքան տարբեր են համագործակցային մեթոդները, այնքան էլ տարբեր են նրանց նկատմամբ մոտեցումները: Ուզում եմ առանձնացնել պրոբլեմային ուսուցումը, որպես ինքնուրույն մտածողության տանող ճանապարհ և դիտարկել նրա դերն ու նշանակությունը մեկ դասի օրինակով:

ԳԼՈՒԽ 1. ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

1.1. Պրոբլեմային ուսուցման տեսություն

Դեռևս Սոկրատեսը իր սաներին սովորեցնում էր տրամաբանորեն մտածել: Ավելի ուշ Ժ.Ժ. Ռուսոն ուսուցման ընթացում երեխաների համար ստեղծում էր այնպիսի իրավիճակներ, որ նրանք ստիպված կատարեին ճանաչողական գործողություններ: Այսպես են հանդես եկել պրոբլեմային ուսուցման առաջին սաղմերը, սակայն նրանցից ոչ մեկը այդպիսի ուսուցումը չի անվանել պրոբլեմային: Պրոբլեմային ուսուցումն առաջին անգամ տեսականորեն ու գործնականորեն մշակել է ամերիկացի փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուին: Պրոբլեմային տեսության զարգացման մեջ էական դեր է խաղացել ամերիկացի հոգեբան Ջ.Բրուների հայեցակարգը: Այն հիմնվում է ուսուցման նյութի կառուցվածքի և նոր գիտելիքների յուրացման գործընթացում ինտուիտիվ մտածողության գերիշխող դերի վրա:

Նոր ժամանակներում պրոբլեմային ուսուցման տեսության և պրակտիկայով զբաղվեցին Ա.Մ.Մատուշկինը, Մ.Ի.Մախմատովը, Վ.Օկոն...

Պրոբլեմային ուսուցումը բնութագրվում է որպես ուսուցման պրոցես, որի ժամանակ աշակերտները պարբերաբար ընդգրկվում են ծրագրային նյութի բովանդակության հիման վրա կառուցված պրոբլեմի և պրոբլեմային խնդիրների լուծման մեջ, որոնք էլ ակտիվացնում են աշակերտի մտածողությունը, ընձեռում ստեղծված իրավիճակը գնահատելու, հակասությունները հայտնաբերելու, անհայտը որոնելու, գտնելու, ունեցած գիտելիքները փորձի վերածելու, նոր վարկածներ առաջ քաշելու և գործողությունների նոր եղանակներ մշակելու հնարավորություններ: Հետևաբար պրոբլեմային ուսուցումը ոչ թե պատրաստի գիտելիքների վրա հիմնված կրթություն է, այլ լուծման քայլեր առաջարկող գործընթաց:

Պրոբլեմային ուսուցումը մտավոր գործունեություն է, իսկ ստեղծագործական ընդունակություններն իրականացվում են մտավոր գործունեությամբ: Պրոբլեմային ուսուցումը դասվում է ակտիվ մեթոդների շարքին¹:

1.2. Պրոբլեմային ուսուցման խնդիրներն ու նպատակները՝

¹ Գ.Ե. Դուլյուպյան «Մանկավարժություն» գիրք 1-ին, Երևան 2005

- Սովորել մտածել տրամաբանորեն և գիտականորեն
- Սովորողների համար ուսումնական նյութը դարձնել ցուցադրական և համոզիչ, ձևավորել ոչ թե գիտելիք, այլ գիտելիք – համոզմունք, ինչը հիմք կհանդիսանա գիտական աշխարհայացք ձևավորելու համար
- Նպաստել կայուն գիտելիքների ձևավորմանը, քանի որ սովորողների կողմից ինքնուրույն ձեռքբերված տեղեկատվությունն ամուր պահպանվում է հիշողության մեջ: Եթե նույնիսկ մոռացվում է, ապա այն հիշողությամբ վերականգնվում է՝ կրկնելով դատողության ապացուցման և հիմնավորման քայլերը
- Ներգործել աշակերտների հուզական աշխարհի վրա, ձևավորել այնպիսի զգացումներ ինչպիսիք են վստահությունն իր ուժերի նկատմամբ, բավարարվածությունը մտավոր գործունեությունից
- Ձևավորել տարրական հմտություններ հետազոտական աշխատանքում
- Ձևավորել դրական վերաբերմունք և հետաքրքրություն ինչպես ուսումնական առարկայի, այնպես էլ ուսուցման նկատմամբ ընդհանրապես:

Պրոբլեմային ուսուցման գերագույն նպատակը սովորողների տրամաբանական մտածողության և ստեղծագործական գործունեության զարգացումն է:

Իզուր չեն հոգեբաները պնդում, որ պրոբլեմի օրինաչափությունները նաև մտածողության զարգացման օրինաչափություններ են:

1.3. Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացությունները

Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացություններն են՝

1. Պրոբլեմային հարց
2. Պրոբլեմային իրավիճակ
3. Ուսումնական պրոբլեմկամ պրոբլեմային խնդիր:

Պրոբլեմային հարց.

Առաջացնում է իմացական դժվարություն: Եթե հարցի պատասխանը չի պարունակում նոր գիտելիքներ կամ որոնելի անհայտ, ապա այդպիսի հարցը պրոբլեմային չէ: Պրոբլեմային հարցին ներկայացվում են հետևյալ պահանջները՝ պետք է կապ ունենա նախկին յուրացրած գիտելիքների հետ, պետք է իր մեջ

պարունակի ճանաչողական դժվարություններ, որի լուծումը պահանջում է մի շարք մտավոր գործողություններ²: Պետք է կապված լինի սովորողների զգացումների հետ, առաջացնի իմացածի անբավարարություն և նորը հայտնագործելու ձգտում:

Պրոբլեմային իրավիճակ.

Պրոբլեմային հարցը բերում է պրոբլեմային իրավիճակի, որը պրոբլեմային ուսուցման կենտրոնական օղակն է՝ լի հակասություններով: Պրոբլեմային իրավիճակը սովորողների հետաքրքրությունը շարժող հիմնական գործոն է, նոր մտքերի զարթուցիչ:

Ուսումնական պրոբլեմ.

Դա ենթապրոբլեմների և պրոբլեմային հարցերի համակցություն է: Ուսումնական պրոբլեմի էությունը նրանում եղած անհայտն է, որի հայտնագործումը կապված է աշակերտների տրամաբանության, մտածողության և ճանաչողական գործունեության ծավալների հետ: Ուսումնական պրոբլեմի նպատակն է աշակերտների մեջ արմատավորել հետազոտական հմտություններ, այսինքն առաջադրանքը, խնդիրները ինքնուրույնաբար լուծելու, դրանց անհայտները հայտանաբերելու կարողություններ:

Ուսումնական պրոբլեմը ունի մի քանի առանձնահատկություններ

- Ճշմարտությունը, որը սովորողները բացահայտում են ուսումնական հիմնախնդրի լուծման ընթացքում, գիտությանը արդեն հայտնի է: Աշակերտների համար այդ փաստերը նոր են և նրանք մտածում են ինչպես առաջին անգամ հայտնագործողներ:
- Ուսումնական պրոբլեմի հետազոտությունները միշտ կատարվում է ուսուցչի անմիջական մասնակցությամբ և օգնությամբ, բայց սովորողները պետք է համոզված լինեն, որ իրենք ինքնուրույն են հասել նպատակին:³

² Կ.Բաբայան «Համագործակցային ուսուցումը հասարակական փոխհարաբերությունների համատեքստում» մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր N1 2016 թվական

³ Махмутов М.И Проблемное обучение. Основные вопросы Теории. 2016г.

ԳԼՈՒԽ 2. ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴ

2.1. Պրոբլեմային ուսուցման ֆունկցիաները

Պրոբլեմային ուսուցումը իրականացնում է զարգացնող և դաստիարակչական ֆունկցիաներ:

Չարգացնող ֆունկցիաները բազմազան են: Կարելի է առանձնացնել, աշակերտների մտածողության մոդելավորումը, որը բերում է արդյունավետության բարձրացման: Ուսումնական առարկաների տրամաբանությունը մոտեցնում է գիտությունների տրամաբանությանը, իսկ ուսուցման տրամաբանությունը ճանաչողական տրամաբանությանը: Կազմակերպում է սովորողների խմբային աշխատանքները, ապահովելով նրանց մտքի դիալեկտիկական զարգացումը, ընդլայնում է սովորողների որոնումների ոլորտը:

Դաստիարակչական ֆունկցիաներ.

Կապված է սովորողների ստեղծագործական հմտությունների, ձեռք բերված գիտելիքների ստեղծագործաբար օգտագործման, ստեղծագործական փորձի կուտակման հետ: Պրոբլեմային ուսուցման ժամանակ կարևորվում է ընկերասիրությունը, փոխադարձ հարգանքի և դրական հույզերի դրսևորվումները, որոնք շատ կարևոր են անձի որակների ձևավորման համար: Պրոբլեմային ուսուցումը ունի դաստիարակչական առանձնահատուկ ֆունկցիա՝ դա աշակերտի գիտական աշխարհայացքը ձևավորող ֆունկցիան է, որի միջոցով ուսուցիչը կողմնորոշում է աշակերտների ճանաչողական, տեսական և պրակտիկ գործունեությունը, զարգացնում և ձևավորում պատկերացումները և համոզմունքները աշխարհի և դրա օրինաչափությունների, հասարակության և մարդու նկատմամբ:

2.2. Պրոբլեմային ուսուցման առավելություններն ու թերությունները

Առավելություններ.

- զարգացնում է սովորողների տրամաբանական, դիալեկտիկական մտածողություն.

- Ուսումնական նյութը դարձնում է ապացուցելի.
- Ուսումնական գործընթացը դարձնում է հուզական.
- ընձեռում է միջառարկայական կապերից օգտվելու հնարավորություն.
- Ձեռքբերված գիտելիքները երկար ժամանակ մտապահվում են.
- մեծանում է աշակերտների ինքնագործունեության շրջանակը, լայնանում նրանց որոնողական, հետազոտական աշխատանքներ կատարելու ոլորտը.
- Պրոբլեմային ուսուցումը ուղիղ ճանապարհ է դեպի ինքնաճանաչում և ինքնաբացահայտում.

Թերություններ.

- ինդրի լուծումները ժամանակի մեծ ծախս են պահանջում, դասաժամը կարող է չբավականացնել.
- շատ հասկացություններ և օրինաչափություններ աշակերտը ունակ չէ ինքնուրույն բացահայտել.
- ուշադրությունը ուղղելով ինդրի լուծման առանձին փուլերի վրա, աշակերտը հաճախ կորցնում է պատկերացումը ամբողջի վերաբերյալ և չի կարողանում հաջորդաբար վերարտադրել.
- աշակերտը կարող է պարզապես չդիմանալ երկարատև մտավոր աշխատանքի.
- աշակերտը կարող է առաջ քաշել ինչպես ճշգրիտ, այնպես էլ սխալ առաջարկություններ, որոնք կարող են երկար ժամանակ մտապահվել:

2.2. Պրոբլեմային ուսուցման կազմակերպման մակարդակները

Պրոբլեմային ուսուցման կարևոր պայմաններից է ուսուցման կազմակերպման ժամանակ անսպասելի և հակասական հարցադրումների և իրավիճակների ստեղծումը, որոնք նպաստում են ինքնուրույն մտածողության ձևավորմանն ու զարգացմանը: Նման անսպասելի իրավիճակներ ստեղծելիս չպետք է մոռանալ իրավիճակի հոգեբանական գործոնի մասին, որը վերաբերվում է աշակերտների տարիքային առանձնահատկություններին /հիմնական դպրոց, ավագ

դպրոց.../: Սա ձևավորում է պրոբլեմային ուսուցման կազմակերպման մակարդակները⁴:

Առաջին մակարդակ.

Նախատեսվում է հիմնական դպրոցի համար: Առաջադրվում են պարզ խնդիրներ պարունակող հարցեր և ենթադրում են պարզ պատասխաններ:

Երկրորդ մակարդակ.

Ուսուցչի կողմից պրոբլեմային իրավիճակի ստեղծում և լուծման որոնում աշակերտների հետ միասին: Այսպիսի մոտեցման համար կարելի է հանգուցալուծմանը հասնել հուշող, ուղղորդող հարցերի միջոցով կամ «շղթա» խաղի միջոցով, երբ մեկնաբանում է հարցի մի կողմը, իսկ մյուսները լրացնում են չկրկնելով իրար: Բացի ուսումնական նպատակներից այն լուծում է նաև դաստիարակչական հարցեր՝ համագործակցելու միմյանց լրացնելու, լսելու....

Երրորդ մակարդակ

Ուսուցչի կողմից պրոբլեմային իրավիճակի ստեղծում և լուծման որոնում, վերջնարդյունքի ապահովում միայն աշակերտներին ինքնուրույն աշխատանքների միջոցով: Այս դեպքում սովորողների ինքնուրույն աշխատանքին կարող է նպաստել ուսուցչի ուղղորդած լրացուցիչ գրականությունը: Այս մակարդակը հարմար է ավելի հասուն տարիքի աշակերտների հետ աշխատելիս ովքեր ինքնուրույն աշխատանքի բավականաչափ փորձ ունեն և կարող են առաջարկեն խնդրի լուծման արտասովոր և անսպասելի եղանակներ⁵:

Չորրորդ մակարդակ

Ուսուցչի առաջարկած նյութից աշակերտների կողմից պրոբլեմային իրավիճակի ստեղծում և լուծման ինքնուրույն որոնում: Այս ձևի առանձնահատկությունը հետազոտական մոտեցումն է: Սովորողներից պահանջվում է լրացուցիչ գրականության և անհրաժեշտ այլ ռեսուրսների ինքնուրույն որոնման հմտություններ: Անհրաժեշտ է նախորդ մակարդակների հատկանիշներից բացի ունենալ ստեղծագործական մտածողություն, երևույթների միջև փոխադարձ

⁴ Մ.Խաչատրյան ձեռնարի «Ուսուցման արդյունավետ հնարներ»

⁵ Մ.Արթուրյան Յու.Ա.«Պրոբլեմային իրավիճակներն ուսուցման պրոցեսի ակտիվացման միջոցներ, Երևան 2004

կապերի և դրանց միասնական ամբողջություն կազմելու մեխանիզմների բցահայտման կարողություն:

Չետագոտության ընթացք՝

Չետագոտությունս անցկացրել եմ 11 հումանիտար հոսքի դասարանի հետ՝ «Զրային պաշարներ» թեմայի ուսուցման ժամանակ: Առանձնացրել եմ Սևանա լճի հետ կապված որոշ բնապահպանական խնդիրներ: Աշակերտների հետ վերհիշել եմ ՀՀ ջրային տարածքների՝ մասնավորապես Սևանա լճի հետ կապված բնապահպանական խնդիրները: Հստակեցրել եմ աշխատանքի նպատակը՝ պրոբլեմային ուսուցման ազդեցությունը սովորողների վերլուծական մտածողության զարգացման վրա և ժամկետները:

Դասարանը բաղկացած էր 16 աշակերտներից, ձևավորեցի երկու խումբ: Խմբերին առաջադրվեց խնդիր պարունակող հարցեր կապված Սևանա լճի հիմնախնդիրների հետ⁶: Ամբողջ աշխատանքի ընթացքում ինձ վերապահել եմ ուղղորդող ուսուցչի դերը՝ աջակցելով երկու խմբերի աշակերտներին:

Առաջին խմբին առաջարկվեց մտածել հետևյալ պրոբլեմային հարցերի շուրջ.

- Ինչու է Սևանա լճի գույնը դառնում կանաչ և ինչի կարող է դա հանգեցնել
- Ինչ եք կարծում ջրի կանաչ գույնը վտանգավոր է արդյոք մարդու և ջրային կենդանիների համար /եթե այո, ապա ինչու/
- Գիտե՞ք այնպիսի դեպքեր, երբ մոլորակի վրա գոյություն ունեցող խոշոր լիճը չորանա: Ինչ խնդիրների դա կարող է հանգեցնել⁷:

Երկրորդ խմբին առաջարկվեց հետևյալ պրոբլեմային հարցերը

⁶ Ս.Խաչատրյան ձեռնարի «Ուսուցման արդյունավետ հնարներ», Երևան 2020

⁷ Лернер И.Я. «Дидактические основы методов обучения

- Եթե մենք գիտենք, որ ջրիմուռները կարող են ապրել քաղցրահամ ջրերում և դա իրենց ապրելու միջավայրերից մեկն են, ապա ինչու ենք անհանգստացած այն փաստով, որ Սևանա լճում ջրիմուռների քանակը տարեց տարի ավելանում է:
- Ինչպիսի կանխարգելիչ միջոցառումներ կառաջարկեիք Սևանա լճում որ ոչակի պատճառներով տարեցտարի ավելացող ջրիմուռների քանակը նվազեցնելու համար:
- Ըստ Ձեզ ինչն է խանգարում այս խնդրի լուծումը գտնելու համար:

Ներկայացված աշխատանքները ուսումնասիրելուց հետո արդյուքները վերլուծելու համար կազմվեց ռուբրիկ:

N	Պնահատման չափանիշները	Ձեռքբերումների մակարդակ			
		5 միավոր /գերազանց/	4 միավոր /շատ լավ/	3 միավոր /լավ/	2 միավոր /բավարար /
1	Տրված առաջադրանքն երի ժամանակին կատարումը	Աշխատանքը կատարված է ճիշտ ժամանակին:	Աշխատանքի մեծ մասը կատարված է ժամանակին:	Աշխատանքի որոշ մասը կատարված է ժամանակին:	Աշխատանքի մեծ մասը կատարված չէ ժամանակին:
2	Համագործակցային հմտություններ	Խմբի բոլոր անդամների մոտ դրսևորվում է համագործակցային և աշխատանքի կարողություններ և հմտություններ:	Խմբի անդամների մեծ մասի մոտ դրսևորվում է համագործակցային աշխատանքի	Խմբի որոշ անդամների մոտ դրսևորվում է համագործակցային աշխատանքի	Խմբի անդամների մոտ չի դրսևորվում համագործակցային աշխատանքի

		<p>Խմբի բոլոր անդամները ցուցաբերում են պատասխանատվության բարձր զգացում թիմային աշխատանքի և վերջնարդյունքի նկատմամբ:</p> <p>Ունեն իրար լսելու, գործողությունները համաձայնեցնելու, համատեղ որոշումներ կայացնելու կարողություններ:</p> <p>Ամբողջ աշխատանքի ընթացքում դրսևորվում է փոխադարձ ընկերասիրություն և հարգանք միմյանց նկատմամբ:</p>	<p>կարողություններ և հմտություններ:</p> <p>Խմբի անդամների մեծ մասը ցուցաբերում են պատասխանատվության բարձր զգացում թիմային աշխատանքի և վերջնարդյունքի նկատմամբ:</p> <p>Մեծ մասի մոտ դրսևորվում է իրար լսելու գործողությունները համաձայնեցնելու և համատեղ որոշումներ կայացնելու կարողություն</p>	<p>կարողություններ և հմտություններ:</p> <p>Խմբի որոշ անդամների մոտ է նկատվում պատասխանատվության զգացում վերջնարդյունքի նկատմամբ, որն էլ բերում է աշխատանքը ժամանակին կատարելու դժվարությունների և տարաձայնությունների: Թույլ է արտահայտված նաև իրար լսելու, համատեղ որոշումներ կայացնելու կարողությունները, փոխադարձ հարգանքի և ընկերասիրության</p>	<p>կարողություններ և հմտություններ:</p> <p>Խմբի անդամները չեն ցուցաբերում պատասխանատվություն թիմային աշխատանքի և վերջնարդյունքի նկատմամբ:</p> <p>Չունեն իրար լսելու, գործողությունները համաձայնեցնելու և համատեղ որոշումներ կայացնելու կարողություններ: Չի նկատվում նաև փոխադարձ ընկերասիրու</p>
--	--	--	--	---	--

			ներ: Ոչ բոլոր անդամների մոտ դրսևորվեց ընկերասիրու թ յուն և հարգանք միմյանց նկատմամբ:	դրսևորումները ևս թույլ են արտահայտված:	թ յուն և հարգանք միմյանց նկատմամբ:
3	Համացանցից գրագետ օգտվելու և համակարգչով աշխատելու հմտություններ	Խմբի բոլոր անդամները լիովին կարողանում են գրագետ օգտվել համացանցից և կատարել համակարգչային աշխատանքներ :	Խմբի անդամների մեծ մասը կարողանում են գրագետ օգտվել համացանցից և կատարել համակարգ չային աշխատանքն եր	Խմբի քիչ թվով մասնակիցները կարողանում գրագետ օգտվել համացանցից և կատարել համակարգ չային աշխատանքներ :	Խմբի 90% անդամները չեն կարողանում գրագետ օգտվել համացանցից և կատարել համակարգ չային աշխատանք ներ :
4	Մասնակցություն և	Խմբի բոլոր անդամները ջանքեր են ներդնում առաջադրանքներ ի ճշգրիտ կատարման համար:	Խմբի ոչ բոլոր անդամներն են ջանքեր ներդնում առաջադրանք ների ճիշտ կատարման համար:	Խմբի անդամներից որոշ աշակերտներ դժկամորեն փորձում են մասնակցել աշխատանքի	Խմբի անդամների 90 % մասնակցությ յուն չեն ցուցաբերում առաջադրան ք

				կատարմանը:	ների կատարմանը:
5	Կատարված աշխատանքի ներկայացում	Խմբի բոլոր անդամները մասնակցում են աշխատանքի ներկայացմանը՝ շնորհիվ աշխատանքի ճիշտ բաշխման: Կարևորվում է յուրաքանչյուր աշակերտ՝ որպես թիմային աշխատանքի մասնակից: Խոսքը համոզիչ է, գրագետ, գեղեցիկ հայերենով: Աշակերտների մոտ դրսևորվում է ինքնուրույն մտածելու, դատողություններ անելու, վերլուծելու, եզրահանգումներ անելու ունակություններ:	Խմբի անդամների մեծ մասը մասնակցում են աշխատանքի ներկայացման ը: Աշխատանքի բաժանումը հստակ չէ: Ոչ բոլոր աշակերտներ ն են կարևորվում որպես թիմային աշխատանքի մասնակիցներ : Խոսքը համոզիչ է, բայց ոչ այնքան գրագետ: Աշակերտներն ունեն ինքնուրույն մտածելու և դատողություն	Քիչ թվով աշակերտներ են մասնակցում աշխատանքի ներկայացմանը: Մնացած աշակերտները անտարբեր են որպես թիմային աշխատանքի մասնակիցներ: Խոսքը համոզիչ չէ և գրագետ: Թույլ է արտահայտված նաև ինքնուրույն մտածելու դատողությունն եր անելու, վերլուծելու, եզրահանգումնե ր անելու ունակություննե րը	Խմբի անդամների մեծ մասը չեն մասնակցում աշխատանքի ներկայացման ը: Չի ձևավորվում թիմային աշխատանք: Ներկայացմա նը մասնակցում են որոշ աշակերտներ, որոնց խոսքը ոչ հստակ է, ոչ էլ գրագետ: Բացակայում է ինքնուրույն խոսքը և դատողություն և ներ անելու կարողություն ը:

			ներ անելու կարողություն ներ, բայց վերլուծական միտքը թույլ է արտահայտվ ած:		
--	--	--	---	--	--

I խմբի գնահատումը և միավորները ըստ ռուբրիկի	
1.չափանիշ	5 միավոր
2.չափանիշ	5 միավոր
3.չափանիշ	5 միավոր
4.չափանիշ	5 միավոր
5.չափանիշ	5 միավոր
Ընդամենը	25 միավոր

II խմբի գնահատումը և միավորները ըստ ռուբրիկի	
1.չափանիշ	5 միավոր
2.չափանիշ	4 միավոր
3.չափանիշ	5 միավոր
4.չափանիշ	4 միավոր
5.չափանիշ	4 միավոր
Ընդամենը	22 միավոր

Յետադարձ կապ սովորողների հետ Գնահատման օբյեկտիվության դիտարկում խմբի անդամների կողմից			
Ընդհանուր դասարան (18 հոգի)	I խումբ (9 անձ)	II խումբ (9 անձ)	
Լիովին համամիտ եմ գնահատման հետ:	9 անձ	5 անձ	
Չիմնականում համամիտ եմ գնահատման հետ:	0	4 անձ	
Մասամբ համամիտ եմ գնահատման հետ:	0	0	
Ընդհանրապես համամիտ չեմ գնահատման հետ:	0	0	

Վերլուծելով աշխատանքի ամբողջ ընթացքը՝ եկա այն եզրակացության, որ թեկուզ առաջադրված հարցերը ոչ այնքան բարդ խնդիրներ պարունակող հարցեր էին, այնուամենայնիվ, առաջ բերեցին մեծ ոգևորություն համատեղ աշխատելու առումով: Երկու խմբերն էլ աշխատեցին մեծ ոգևորությամբ, կարողացան խմբի ներսում կատարել ճիշտ աշխատանքի բաժանում, դրսևորել իրար հետ համագործակցելու, իրար լսելու, կարծիքները համադրելու և եզրահանգումներ կատարելու կարողություններ:

Կարծում եմ՝ համագործակցային մեթոդներով աշխատելը ուղղակի դարձել է պահանջ ու հրամայական: Չամոզվեցի նաև, որ ցանկացած մեթոդ օգտագործելիս և, առհասարակ, սովորողների գիտելիքների հմտությունների և կարողությունների լավագույն արդյունքներ տեսնելու և արձանագրելու համար կարևոր է ուսուցչի դերակատարումը, աջակցությունը և ուղղորդումը:

Համագործակցային մեթոդներով աշխատելիս տեսանելի է դառնում աշակերտի մասնակցությունը ու ներգրավվածությունը վերջնարդյունքի ձևավորման մեջ:

Աշակերտի մոտ զարգանում է այնպիսի կարողունակությունները, ինչպիսիք են վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, սեփական անձի ինքնաճանաչումը ու գնահատումը, ընկերների հետ փոխհարաբերվելու և իր ունեցած գիտելիքները ընդհանուրի շահերին ծառայեցնելու հմտությունները:

Այս մեթոդը կարելի է կիրառել կենսաբանության դասերին տարբեր դասարաններում՝ առաջադրելով տարբեր բարդության խնդիրներ պարունակող հարցեր: Մեթոդը տանում է ինքնուրույն մտածողության՝ աշակերտների մոտ զարգացնելով նաև այնպիսի կարևոր կարողություններ, ինչպիսիք են ինքնաճանաչումն ու ինքնագնահատականը, խմբի ներսում ընկերների հետ համատեղ աշխատելու, հարաբերվելու ունակությունները, ընկերասիրությունը, ինչու չէ՝ նաև գեղեցիկ ու հայեցի խոսքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նոր սերնդի դաստիարակությամբ և կրթությամբ զբաղվում է կրթության ոլորտը՝ հատկապես հանրակրթությունը: Երեխայի հասկանալու, սովորելու և ընկալելու կարողությունները առավել ակտիվ են դպրոցական տարիքում: Ուղեղի աշխատանքի արդյունավետությունը կախված է նրանից, թե ինչպես է այն մշակվում, հղկվում և վարժվում: Այս գործում մեծ է մեր՝ ուսուցիչներիս դերը: Մենք պետք է ուսուցման պրոցեսը կազմակերպենք և անցկացնենք այնպես, որ կարողանանք լիարժեք օգտագործել երեխայի ընդունակությունները, հիշողությունը, ուշադրությունը և մտածողությունը: Չմոռանանք որ բոլոր իրավիճակներում խնդիրներին ճիշտ լուծումներ են տալիս այն աշակերտները, ովքեր տիրապետում են գիտելիքին:

Աշակերտից պահանջվում է ոչ միայն գիտելիք, այլ նաև գիտելիքի կիրառման հմտություններ, համագործակցության, ազատ արտահայտվելու և ստեղծագործաբար մոտենալու ունակություններ, որոնց ձևավորման համար անհրաժեշտ և պարտադիր է համագործակցային ուսուցման կիրառումը:

Կենսաբանության դասավանդման արդյունավետությունը բարձրանում, աշակերտների կողմից նյութի յուրացումը դարձնում է արդյունավետ և մատչելի, երբ տեսական գիտելիքներն ամրապնդվում են նոր մեթոդներով ու հնարներով, լաբորատոր և գործնական աշխատանքներով, ՏՀՏ-ի ինտեգրմամբ: Դա սովորողների, գիտելիքների ձեռք բերման, ընդհանրացումներ կատարելու, վերլուծական մտածողության ինքնուրույն եզրահանգումներ կատարելու նախադրյալ է:

Չետագոտական աշխատանքի արդյունքների վերլուծություն կատարելուց հետո դարձյալ գալիս ենք այն եզրահանգման, որ մեթոդները նպաստում են սովորողի ստեղծագործական, հաղորդակցական, ինքնուրույն գործունեության, կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը դաստիարակում են բարոյական որակներ, բարձրացնում ուշադրությունը և առաջադիմությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու.Ա. «Պրոբլեմային իրավճակներն ուսուցման պրոցեսի ակտիվացման միջոցներ», Երևան 2004
2. Ղուկումյան Գ. Ե. «Մանկավարժություն» գիրք 1-ին, Երևան 2005
3. Բաբայան Կ. «Չամագործակցային ուսուցումը հասարակական փոխհարաբերությունների համատեքստում» մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր N1 2016 թվական
4. Ս.Խաչատրյան ձեռնարկ «Ուսուցման արդյունավետ հնարներ», Երևան 2020
<https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf>
5. Матюшкин А.М “Проблемные ситуации в мышлении”, Москва 1972г.
https://www.phantastike.com/pedagogics/problem_situations/pdf/
6. Махмутов М.И “Проблемное обучение. Основные вопросы Теории”. 2016г.
http://vmb.selet.biz/wp-content/uploads/public/makhmutov_izbr_tom1.pdf
7. Лернер И.Я. “Дидактические основы методов обучения”, Москва, 1981
https://www.studmed.ru/view/lerner-iya-didakticheskie-osnovy-metodov-obucheniya_4c9038bec46.html?page=6